ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆԻ ՄՈՏ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-ԻՆ, ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԳՈՐԾԱԿԱՐԳԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

Մասնակցությամբ՝

- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝** **Արամ Հովհաննիսյանի**
- **Արմավիրի մարզպետի խորհրդական՝** **Բարսեղ Նիկողոսյանի**
- **Արմավիրի մարզպետի օգնական՝** **Մանվել Մելիքյանի**
- **Արմավիրի մարզպետի օգնական՝** **Նարեկ Խաչատրյանի**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ՝** **Տաթևիկ Մկրտչյանի**

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ՝

1. ՀՀ Արմավիրի մարզպետի մոտ 13.01.2025թ. կայացած գործակարգավարական խորհրդակցության ընթացքում մարզպետի կողմից տրված հանձնարարականների կատարման ընթացքի և մարզում առկա մի շարք հրատապ խնդիրների քննարկում

Քննարկվեցին՝

Հարց 1. Համապատասխան ձևաչափով մշակված սահիկաշարի և N 1 ձևաչափ-տեղեկանքի նախնական տարբերակը ՀՀ Արմավիրի մարզպետի քննարկմանը ներկայացնելու մասին

/Լիլիթ Մուշեղյան–ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ,
Տաթևիկ Մկրտչյան– ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ /

Օրակարգային առաջին հարցի կապակցությամբ հանդես եկած ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Լիլիթ Մուշեղյանը և Աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ Տաթևիկ Մկրտչյանը պարզաբանման կարգով ներկայացրեցին ՀՀ վարչապետի մոտ 2025 թվականի ընթացքում նախատեսվող ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի 2024 թվականի հաշվետվության ներկայացման սահմանված ձևաչափով սահիկաշարի մշակման ուղղությամբ տարված աշխատանքների ընթացքի մասին:

Այնուհետև, սահիկաշարի կազմման գործընթացին առնչվող ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները

յուրաքանչյուրն իր մասով ներկայացրեցին սահիկաշարում զետեղված իրենց ղեկավարած կառուցվածքային ստորաբաժանմանը վերաբերելի տեղեկատվությունը:

ՀՀ Արմավիրի մարզպետ Արգիշտի Մեխակյանը, ծանոթանալով սահմանված ձևաչափով սահիկաշարի մշակման ուղղությամբ տարված աշխատանքների գործընթացին, և սահիկաշարի ձևաչափի նախնական տարբերակի քննարկման արդյունքների համադրմամբ լսելով կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների կողմից ներկայացված տեղեկատվությունները, հանդես եկավ մի շարք կարևոր դիտարկումներով, որոնք ընդհանուր առմամբ վերաբերում էին հաշվետվության սահիկաշարով պահանջվող բովանդակային և տեխնիկական բաղադրիչների լիարժեք կատարմանը:

Հանձնարարական՝

1. ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝

ա/ շարունակել սերտ համագործակցությունը ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Լիլիթ Մուշեղյանի և անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ Տաթևիկ Մկրտչյանի հետ՝ հաշվետվության սահիկաշարով պահանջվող բովանդակային և տեխնիկական բաղադրիչների, ինչպես նաև մարզպետի կողմից արված դիտարկումների լիարժեք կատարումն ապահովելու նպատակով:
բ/ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Լիլիթ Մուշեղյանին և անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ Տաթևիկ Մկրտչյանին՝ հետաձգել սահիկաշարի մի մասի քննարկումը և հաշվի առնելով ՀՀ Արմավիրի մարզպետի կողմից արված դիտարկումները, ինչպես նաև հիմք ընդունելով սահիկաշարի պատասխանատուների մասնակցությամբ սույն թվականի հունվարի 24-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում կայանալիք աշխատանքային քննարկման արդյունքները, լրամշակել և համապատասխան ձևաչափով մշակված սահիկաշարի և N 1 ձևաչափ-տեղեկանքի վերջնական տարբերակը նախապես ներկայացնելով ՀՀ Արմավիրի մարզպետի քննարկմանը, ՀՀ վարչապետի աշխատակազմ և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել 2025 թվականի հունվարի 27–ին:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանին:

Հարց 2. 2025 թվականի ընթացքում մարզի զորակոչային, զորահավաքային նախապատրաստության, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում պլանավորված միջոցառումների մասին տեղեկատվության ներկայացում

/Անդրանիկ Լալայան–ՀՀ Արմավիրի մարզպետի
աշխատակազմի զորահավաքային
նախապատրաստության բաժնի պետ/

Օրակարգային երկրորդ հարցի առնչությամբ 2025 թվականի ընթացքում մարզի զորակոչային, զորահավաքային նախապատրաստության, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում պլանավորված միջոցառումների մասին տեղեկատվությամբ հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Անդրանիկ Լալայանը, ով նշեց, որ 2025 թվականի ընթացքում **ժամկետային զինվորական ծառայության զորակոչ** մարզում նախատեսված է

անցկացնել 2 փուլով (համաձայն կառավարության համապատասխան որոշումների), ձմեռային և ամառային զորակոչեր: Զորակոչիկների ծանուցման աշխատանքներն իրականացվելու է մարզի տեղական ինքնակառավարման մարմինների աջակցությամբ: Համաձայն Կառավարության որոշումների նախատեսված է անցկացնել մարզային զորակոչային հանձնաժողովների նիստեր՝ մինչև 4 անգամ:

2024թ ձմեռային զորակոչի պահանջարկն ըստ օրերի

Ամսաթիվ	07.01.25թ	07.01.25թ	07.01.25թ	07.01.25թ	07.01.25թ	07.01.25թ	07.01.25թ	07.01.25թ	07.01.25թ
Զ/կ Քանակը	50	50	50	50	50	50	50	50	50

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Անդրանիկ Լալայանը միաժամանակ նշեց, որ զորակոչիկների քանակական տվյալները համաձայն զինկոմիսարիատի ներկայացված պահանջարկի թվերի հնարավոր է ենթարկվեն փոփոխության՝ տվյալ օրվա իրավիճակից կախված:

2025 թվականի ընթացքում **<u>զորահավաքային նախապատրաստության միջոցառումներ</u>** (վարժական հավաքներ) մարզում անցկացվելու է համաձայն Կառավարության համապատասխան որոշումների:

Զինապարտների ծանուցման աշխատանքներն իրականացվելու է ՀՀ ՊՆ ՀԶԿ Արմավիրի մարզի զինվորական կոմիսարիատի կողմից՝ մարզի տեղական ինքնակառավարման մարմինների աջակցությամբ և օժանդակությամբ՝ նախորոշված աշխատանքային մեխանիզմով (ազդարարման տեղամասերի մասին համայնքների ղեկավարների հրապարակման ոչ ենթակա որոշումներ): Մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի օժանդակությամբ զինվորական կոմիսարիատի հետ, զուգահեռ աշխատանքի մեթոդով, համայնքներում ճշգրտվելու են զինապարտ քաղաքացիների և կցագրված պահեստազորայինների տվյալները՝ գրառումներ կատարելով համապատասխան գրանցամատյաններում:

ՀՀ Արմավիրի մարզպետի 2024 թվականի դեկտեմբերի 16-ի N 602-Ա որոշմամբ հաստատված «ՀՀ Արմավիրի մարզի **<u>արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության</u>** համակարգերի նախապատրաստման 2025 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ով հաշվետու ժամանակահատվածում Մարզպետի ղեկավարությամբ **Օպերատիվ տակտիկական պատրաստությունից** անցկացվելու է՝

ՀՀ	**Միջոցառումը**	**Կատարման ժամկետը**	**Կատարողներ և մասնակիցներ**
1	**Շտաբային ուսումնավարժություն**	4-րդ եռամսյակ	ՄՓՎ ստորաբաժանումներ, Մարզի ղեկավար կազմ
2	**Հատուկ տակտիկական ուսումնավարժություն**	ապրիլ, հոկտեմբեր	ՄՓՎ ստորաբաժանումներ, Մարզի ղեկավար կազմ

3	**Հրամանատարա-շտաբային ուսումնավարժություն**	15-16-ը ապրիլի	Արմավիրի ՄՓՎ, մարզպետի աշխատակազմ, ԱԻ հանձնաժողով, տարահանման հանձնաժողով, Արմավիրի Նորավան, Մայիսյան, Մեծամորի Մրգաշատ, Արտաշար, Ակնալիճ, Խոյի Արշալույս բնակավայրեր:
4	**Շտաբային ուսումնավարժություն**	21-ը նոյեմբերի	Արմավիրի ՄՓՎ, մարզպետի աշխատակազմ,ԱԻ հանձնաժողով, տարահանման հանձնաժողով, Փարաքաիր Մերձավան, Բաղրամյան, Նորակերտ, Այգեկ, Պտղունք, Արևաշատ, Մուսալեռ բնակավայրերի ղեկավարներ:
5	**Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն**	23-ը հոկտեմբերի	«Վաղարշապատի թիվ 5 ավագ դպրոց»

Մարզային ՔՊ ծառայությունների շտաբի պետերի հետ հրամանատարական պատրաստության պարապմունքներ անցկացվելու է տարվա ընթացքում 8 անգամ տարբեր թեմաներով:

Մյուս միջոցառումները համաձայն վերոգրյալ պլանի:

Մարզպետի որոշմամբ մարզում ստեղծված ՔՊ 11 ծառայությունների պլաններից լրամշակված և մարզպետի համապատասխան որոշմամբ գործողության մեջ են դրված՝

1. Առևտրի և սննդի ծառայություն (պատասխանատու՝ Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչություն),
2. Բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայություն (պատասխանատու՝ Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչություն),
3. Հասարակական կարգի պահպանման ծառայություն (պատասխանատու՝ ՆԳՆ ոստիկանության մարզային վարչություն),
4. Նյութատեխնիկական մատակարարման ծառայություն (պատասխանատու՝ Մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչություն),
5. Բնակչության հատուկ սպասարկումների ծառայություն (պատասխանատու՝ Մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչություն):

Հստակ ժամկետում լրամշակման և մարզպետի որոշմամբ գործողության մեջ դրվելու անհրաժեշտություն կա հետևյալ պլաններում՝

6. **Կապի ծառայություն** (պատասխանատու՝ Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչություն),

7. **Ինժեներական ծառայություն** (պատասխանատու՝ Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչություն),
8. **Բժշկական ծառայություն** (պատասխանատու՝ Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն),
9. **Տրանսպորտային ծառայություն** (պատասխանատու՝ Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչություն),
10. **Էներգետիկայի ծառայություն** (պատասխանատու՝ Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչություն),
11. **Կոմունալ տեխնիկական ծառայություն** (պատասխանատու՝ Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչություն):

Մարզպետի ղեկավարությամբ յուրաքանչյուր կիսամյակում 2 անգամ կանցկացվեն «Զորահավաքային նախապատրաստության միջոցառումների կատարումը մարզում» և «ՔՊ և ԱԻ հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները մարզում» թեմաներով ամփոփիչ և հաշվետու խորհրդակցություններ:

Տարվա ընթացքում ծառայողական անհրաժեշտությունից ելնելով նախապատրաստվելու են Խաղաղ և ռազմական դրության ժամանակ մարզպետի որոշումների, կարգադրությունների, գլխավոր քարտուղարի հրամանների նախագծեր, պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ստորաբաժանումներին, տեղական ինքնակառավարման և այլ մարմիններին ուղղված տարաբնույթ գրություններ: Բաժնի կողմից վերահսկողություն է սահմանվելու աշխատակազմին ենթակա հաստատությունների կողմից ոլորտին առնչվող աշխատանքների ուղղությամբ:

ՀՀ Արմավիրի մարզպետը ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Անդրանիկ Լալայանի ներկայացրած տեղեկատվությունն ընդունեց ի գիտություն:

Օրակարգային հարցերի քննարկմամբ և ամփոփմամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Արգիշտի Մեխակյանը խորհրդակցությունը հայտարարեց ավարտված:

2025-01-23 11:11:12 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝ ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

Արձանագրող՝ ՀՀ Արմավիրի մարզպետի
աշխատակազմի անձնակազմի կառավարման,
փաստաթղթաշրջանառության և հասարակայնության
հետ կապերի վարչության պետ՝ Դավիթ Դավթյան